



Ծ Ա Ն Օ Ր Ի Ե Մ Ք Ե Ր

ՉԱՐԵՆՆ ԵՐՎԱՅԻՆ

Քառասուն տարեկան, լայն ուսերով, սև պեկերով, կարմիր այտերով, համակերպի գեղեցիկ, խօսուն, շարժուն, ժպտուն անձնաւորութիւն մըն է Չարենն Սըվազը զոր Աղեքսանդրացիք իրենց Ազգատանումն փոխ-Ատենապետ ընտրեցին անցեալ կիրակի:

Իզմիրցի . . . ինչ որ յատկութիւն մըն է և հանրաժողովի վաճառական ինչ որ խելագուցութիւն մըն է այդ վառելանիթիւն այս սղու-թեան միջոցին:

Սոսկալի կերպով հայերէն կը խօսի և սքանչելի կերպով բթասոր (fleuret) գործածել գիտէ:

Ժամը եօթնէն ետքը քրքր կը հագնի և կը պոկի կը արգազանները կ'արթնան:

Աշխարհիկ մարդ՝ ինչպէս ընչորդ գիտեն ըլլալ մեր մէջ, սակայն նորէն հերատութեան նշոյլը անգամ չկայ գլխուն վրայ:

Ամենէն շատ երկու բանի խնամք կը տանի նախ անողջութեան և յետոյ արդուպարկին:

Իզմիրի ամենէն շատ ճանչցուած ու սիրուած ընտանիքը գաւակ, հոս ալ յարգել տալ գիտցած է իր անունը որով մտաք զբոսած է լաւագոյն և ամենէն բարձր շրջանակներու մէջ:

Խոտիկ անգամ արտոնած է իրմ և Օսմանիկի երրորդ աստիճանը տուած է իրեն ի նշան համակրութեան:

Տար, յախտուն և տարօրինակ խօսակցութիւն մը ունի որուն մէջ տան անգամ ինքնինը կը հակասու, սակայն գառնու այնքան պարզ և անեղ կ'ընայ որ ունի որ բարի մարդու մը տպաւորութիւնը կը թողու վրայ:

Թշնամի չունի, բայց նախանձոտներ կը բնայ ունենալ:

Երբէք հայ Ազգատանում մը այդքան անմարտ ատենապետ մը ունեցած չէ:

Բարեկործանական ձեռնարկներու անհատաւորութիւն ունի մըն է՝ հրաշքներ ընելու կարող:

Բազմաբար քրքրաբար մը, պարզապէս մէջ շարունակ ինը կը բանայ և բոնքերի մէջ անուուզն Մորջ մը ունի ի ձեռին. այն օրն որ հանրաժողովի անուուորով կ'ըրազի՝ այդ պարանքը կամաց կամաց աղամանդի արժէք ունենալ կ'սկսի կոր, ինչ որ վստահացնել կուտայ մեզի թէ ընչ ասանէն Աղեքսանդրոյ հայ ազգայններն ալ պիտի ունենան իրենց լաւագոյն օրերը:

Վայրկեաններ ունի ուր ջերմ ազգասէր է և ատեն ատեն թաղական ըլլալը կուգայ:

Մինչև հիմա եղած չ'ըլլալուն կը զարմանամ:

Յ. Ա.

Պ. ԳՐՈՒԿԵՐ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐՄԻՔԻ

Երբ ամիս մը առաջ Պ. Գրուկէր թրանսպալի սահմանէն դուրս կ'եղնէր, շատերը կը կարծէին թէ իր երկրէն փախուտ կուտար նա. այդ մասին տարածայնութիւնը, որ հաւանականաւորաբար անգլիական աղբիւրէ ծագում առած կրնար ըլլալ, վերջէն բողբոջին անհիմն ելաւ:

Այս առթիւ մեր ընթերցողաց ուշադրութեանը կը յանձնարարենք հետեւեալ յիշատակարանը որ հրատարակուած է թրանսպալի կառավարութեան պաշտօնական լրագրի Սեպտեմբեր 14 թիւին մէջ. այս յիշատակարանը կը ստէ այդ ամենը, և կը հաստատէ բացարձակապէս թէ Պ. Գրուկէր մեկնած է թրանսպալէն ոչ թէ իր փախուստով, հապա իր կառավարու-

թեան որոշումովը. ահա որոշման բնագրին թարգմանութիւնը.

Նկատելով որ Ն. Բարձրութիւն թրանսպալի նախագահին տարեք բաւական յաւանազան ըլլալուն, անկարելի պիտի լինի իրեն շարունակել պատերազմի հոգեքը.

Բայց նկատելով որ թրանսպալի կառավարութիւնը Ն. Բարձրութեան գերազանցապէս գնահատելի ծառայութիւնները արդենաւորելու պէտք ունի, իր Գործադիր ժողովոյ արտասովոր նիստին մէջ որոշեց հետեւեալը.

Շնորհելով Ն. Բարձրութիւն Պ. Գրուկէրի եօթը ամսուան արձակուրդ մը (զօժէ) որ երկայ Երուպա և ի նպաստ թրանսպալի զատն գիմուսներ ընէ:

Պ. Պարթևի փոխանորդարար պիտի վարէ հանրապետութեան գործերը, ի բացակայութեան Պ. Գրուկէրի:

\*

Պ. Սթօփէլար (\*) Թրանսպալի նախկին Հոլանտական գաւառի կը հաւատաւ թէ թրանսպալի կառավարութիւնը թղթագրում հանած է շրջաբերութեան, որու փոխարէնէն ապահոված է սակիով:

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Էջմիածնայ մտաբեր Զուարթնոց Ս. Գրիգոր աւերակ եկեղեցիին մէջ սեղաններ կատարուելն ու արդէն իրաւի վարդապետ Տատեան վեց արձանագրութիւններ գտած է. արձանագրութիւնները հայերէն, յունարէն ասորերէն, արաբերէն, վրացերէն բեւեռագիրներով են:

Հայ գիշերօթիկներ Կայս. Լիւսեյն մէջ. — Գոհութեամբ կ'կարգանք Պոլսոյ լրագրաց մէջ թէ այս օրերս Պատրիարքարան յանձնուեր է կրթական նախարարութեան մէջ պաշտօնագիրը, որով կ'հաղորդէ կայս. բարեհաճ իրատէ մը, որուն համեմատ 10 հայ աղքատ տղաքներ գիշերօթիկ պիտի ընդունուին կայս. Լիւսեյ մէջ, ուսուի և սնունդ ձրի:

«Արևիկան Մամուլ»-ն անուրով «Ներ-Օր»ի մէջ ծանուցեր կ'ընէ թէ Իզմիրի Ազգ. արկղը պարտքի տակ ինկած է թէ Պարտաց Բարձման Յանձնաժողովը որոշեր է այդ առթիւ չորս հազար սուխոյ փոխառութիւն մ'ընել: Եղած փոխառութեան մասին յիշեալ պատուական հանդէսին մէջ կը կարգանք հետեւեալը:

«Գոհութեամբ կ'տեղեկանանք որ Պարտաց Բարձման գործն, շնորհի մի քանի աղքեցիկ աղագայիներու, անգամ ճնտեսական խորհրդոյ և Պարտաց բարձման Յանձնաժողովին մէջ, սկսած է յառաջ թալել և ստորագրուող աղագայինը կանոնաւոր պարտատուներու փոխարէն կ'վճարեն իրենց ստորագրած գումարներն: Յարմար կ'գտանք յիշատակել այդ պարտատուներու վճարման եղանակի վրայ եղած պարբերութիւնն՝ աղագային փո-

(\*) Պ. Սթօփէլար, երբեմն գահելի Միշազալիսի գաղտնարանի անգամ գտնուած էր հոլանտացի կառավարութեան կողմէ: Ծ. 10.

խառութիւն Զմիւռնիոյ յատկացուած կարուածոյ նորագութեան, շինութեան և պարտաց բարձման՝ որոշեալ և հաստատեալ Ազգ. Գաւառական Ժողովոյ 1896 Մայիս 7 եւ Յունիս 10 միասեւրում մէջ:

Չորս հազար օսմանեան սուխոյ դու-մարի փոխարէն՝ քաղաքիս հայ Հասարակութեան մէջ շրջաբերութեան գրուած են 30 պարտատու 30 տկան օսմ. սուխոյ, 30 պարտատու 20 տկան օսմ. սուխոյ և 30 պարտատու 10 տկան օսմ. սուխոյ, համագումար 4000 սուխոյ երաշխաւորուած աղագային կառուածներով:

Պարտատուի տոկոսի կտրոններն պիտի վճարուին տարեկան միտի վրձարմաք և 3/10 տոկոսով: Իսկ զըլ-խալճարներն առաջին տարին 1/10-ին 10 և յաջորդող վեց տարիներն 1/10-ին 15 տկան, որով եօթ տարուան մէջ պիտի վճարուած լինին ամբողջապէս»:

ՀԱՅԱՍՏԱՆԷՆ.— Կ. Պոլսէն «Թայմզ»-ի կը հեռագրուի թէ Հայոց Պատրիարքարանը հասած տեղեկագիրներուն համեմատ Մայիս և Վանի Հայոց վրձակը տարօրինակ կերպով վստթաւացած է: Գիրտերը հայ գեղացիներուն հունձքը, ոչխարը, եզը, տան կարասիքը աւարի տալով ինչ որ կայ առեր-տարեր են: Բազմաթիւ գեղացիներ անթոթութեան մեծեր են Աղջիկ թէ կին անխտիր իրենց կնոջական պատուին մէջ կը նախատուին: Մուշի առաջնորդը այս սեղեկութիւնները հաղորդելով կը յայտարարէ որ թէ՛ վան և թէ՛ Մուշ հայերը կ'ըզան ընդհանուր շարդի մը որպէսզի կոտորուին, վերնան, աղատին:

Վանէն անգլիացի կ'ըն մը «Թայմզ»-ի կը զրէ թէ Հայերը ծայրայեղ սառու պոնքներ կը կրին: Այս տարի, կ'ընէ, հունձքը առատ եղաւ, բայց ահա կառավարութիւնը այս բարեգէտ պատեհութեան օգտուելով սկսաւ նեղել աղքատ գեղացիները, հարկերը հաւաքելու համար: Հին տարբեր կը պահանջուին Տեղական իշխանութիւնը գեղացիներուն ձեռքէն բռնութեամբ կը յալճատակէ ցորենը շնչին զինով: Չափը 80 զուրուշ հաշուելով կ'առնէ ցորենը գեղացիին ձեռքէն, մինչդեռ անիկա իր ցորենը քաղաք տանելով չափելով 30 դահեկանի կրնայ վաճառել: «Այս երկրին մէջ առատ հունձք մը ժողովրդին համար բարեք մը չի համարուիր»:

Վալարգ խժոժութեանց քանի մը գէպեր կը յիշէ:

Նոր զօրանոցներ շինելու համար թիւրքերը կ'երթան Հայոց ծառերը կը կտրեն կը բերեն: Երբ ծառերուն տէրերը բողբեն, ծեծի և տանջանքի կ'ենթարկուին: Այսպէս, հայ մը ձայն բարձրացուցած ըլլալուն համար թիւրքերը զայն սաստկապէս գանակոծելէ յետոյ ծառը կ'աղցեցին: Նմանապէս ուրիշ երկու հայ ալ բողբած ըլլալով թիւրքերը զանոնք հային տաք թոնիրը խոթեցին, ուր մարած ինկած մնացին. — Թղթակիցը կը նկարագրէ թէ թոնիրը ինչ է: Հայ գեղացի մը 9 ոսկի տուրք վը-

ճարելու համար ոչխարները քաղաք կը տանի կը վաճառէ, և ստակը վրձան ետ կը դառնայ, քանի մը քիւրտերու հետ ընկերակցութեամբ ձամբան հեծեալ քիւրտեր ասոնց կը հանգիւյն, կը կողոպտեն վրանին եղածը, նոյն իսկ գեղատններին կ'առնեն, թէ հայուն և թէ քիւրտերուն: Եւ այս աւաղակութեամբ չ'առաւականանալով, կ'առնեն ինքզ մարդիկը կը տանին լեռան մը զըլտը և խոշոր քարերուն երբեք կը թաղեն: Այս գեղացիներէն մէկը սակայն կը յաջողի ինչքինքը աղատել, և միւսներն ալ կը հանէ քարերուն նիւքէն: Ամենքն ալ մեղի մարմնով կուզան մօտակայ գեղ մը ուր վրանուն գեղատ կը ճարուի, և կ'երթան ինաց տալ իշխանութեան որ աւաղակները փնտռելու ետեւէ է եղեր:

ՆՈՐ ԿԵՆՏԻՔ

— Տիգրանակերտի կոտորածին մասին նորագոյն տեղեկութիւններ կը պահպին. մինչև հսկա. 20 եւրոպական թերթերուն ստացած լուրն է— թէ Տիգրանակերտի գաւառին մէջ, երկու քիւրտ ցեղեր կուտի բռնուած են իրարու հետ և այդ առթիւ կործանած են բազմաթիւ մահճատեղիներ ու քրիստոնեայ զիւղեր: Թիւրք զօրքը իբր թէ խաղաղութիւնը վերականգնելու գացած է. Լաբը օսմանեան աղբիւրներէ տանուած ըլլալուն տարակոյս չը կայ:

ԱՂԵՔԱՆԴՐՈՅ ՄԵՔԵՆԱԿԱՆ ՓՈՒՈՒՐ

Վերջերս անանուն ընկերութիւն մը կազմուած էր Պ. Ռայիլի վարչութեան ներքեւ, Աղեքսանդրոյ մէջ մեքենական մեծ փուռ մը հաստատելու համար. վերջապէս գոյժը իրականացաւ և փուռն բացուած տեղի ունեցաւ ուրբաթ օր մեծ հանդէսով, ի ներկայութեան Աղեքսանդրոյ կառավարչին, հիւպատոսներու, վաճառականներու: Աղեքսանդրոյ գաւառ հոն ժամագրութիւն ըրած էր այր և կին:

Թաղապետութեան նախագահ Պ. Շաքուր ճառ մը արտասանեց, որուն մէջ երկու տեղերը մեծ խնդում պատճառեցին հանդիսականներուն. Պ. Շաքուր ըսաւ. «Ինչպէս որ մեր առօրեայ «Հայր մեր»-ին մէջ «Չհաց մեր հանապաղորդ տուր մեզ այսօր» կ'ընենք, նոյնը պիտի ըսեմ հիմայ մեքենական փուռի հնարիչ Պ. Վալէր Մալէրի «Տէր Վալէր Մալէր. տուր մեզ ընտիր, անարատ և թարմ հաց, որուն կըլիքը պակաս չ'ըլլայ: զիս իբր թաղապետութեան նախագահ վստահացուր որ մէկ հօսպին տեղ մէկ քիւր չը պիտի ըլլայ»:

Մեքենական փուռն ելած հացը միւս փուռերու հացին վրայ բնական է թէ մեծ առաւելութիւններ ունի: Նախ հոն եփուած հացը՝ ինամրով և ամենայն մարտութեամբ պատրաստուած ըլլալուն, առողջապահական տեսակէտով աւելի յարկի է:

Երկրորդ՝ կըլիքին մէջ խաղաղութեան կամ սխալ չի կայ:

Կարծէ որ հակիրճօրէն բացատրենք հոս թէ մեքենական փուռին մէջ հա-

ցը ինչպէս կը պատրաստուի :

Մեքենական փուռին մէջ փոխանակ գործաւորներուն, մեքենաներն են որ կ'աշխատին :

Աղեքսանդրիոյ մեքենական փուռը երեք ընդարձակ սրահներէ կը բաղկանայ. առաջին սրահը խիստ օգտաւէտ, կը պարունակէ երեք մեծ թրիչ մեքենաները որոնք կը ծառայեն թըրելու. փոխանակ գործաւորին ձեռքով թրուելու՝ մեքենայով է որ կը թրուի հայտը :

Մէկ 1/4 ժամէն 750 քիլո հայտ (խամուր) կը թրուի, հայտը կը տրուի երկրորդ սրահ մը. եփուելու համար տասնի չափ փուռեր կան :

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Քարթաւունէն Նոյ. 24ին «Տէյի Էքսքրէս»-ին քաջուած հեռագրի մը համաձայն, Լորտ Քիչնէր Նոր ծրագիր մը գծած է Թրանսպաի խնդրոյն համար :

Այդ ծրագրին գործադրութիւնը, կ'ըսուի, պատերազմէն վերջ պիտի ապշ Գործողութիւնները սկսելէ առաջ լրագիրներու թղթակիցները բոլորն ալ պիտի դուրս հանուին :

— Թիէն. Չինէ՛ Ռուսական աղբիւրներէ եկած լուրերուն նայելով՝ Ռուսիան երկաթուղւոյ խնդրոյն մէջ յաղթանակը տարած է. ինչ միջոցներով ըլլալը յայտնի չէ. ու տոմսակներն ուսերէն լեզուով տպուած են արդէն :

— Համպուրկի մէջ սնտուկ մը բռնուած է որու մէջ երեք միլիոն ֆրանք արժողութեամբ Թրանսպաի ոսկի կայ եղեր : Տեղոյն կառավարութիւնը ըսած է թէ՛ այդ արկղին բռնուիլը Անդրիան չէ որ պահանջած է մեզմէ, այլ ոսկիին տէրերը մասնաւորապէս խնդրեր են : Խնդիրը դատարան կ'ըլնայ, և այն մարդը որուն զրկուած է եղեր այդ ոսկի պարունակող սնտուկը, կը պնդէ թէ՛ ոչ մի առնչութիւն չունի ան՝ Պ. Քրուկէրի հետ :

— Կ'ըսուի թէ Կովկասի և Սէն-Քէթրպուրկի մէջ գտնուող մահմեդական գիտնականները միտք ունին եղեր զուրանը «ուղղած» հրատարակելու, և ատոր համար հրաման խնդրած են Ռուսիոյ մայրաքաղաքին հասարակաց գրադարանի տնօրէնութեանը որպէսզի հոն գտնուած մէկ զըչագիր զուրանի ամեն մէկ թերթին լուսանկարը առնեն : Այդ այն գրչագիր զուրանն է որ՝ Կառուցման իշխանը՝ Սամարղանտի նուաճումէն ետքը՝ Ռուսաստան բերաւ :

— Ռօթթերի գործակալութիւնը Նոյ. 24 թուով Բարիզէն Պ. Քրուկէրի հոն համարը կը հեռագրէ, ուրկէ հետեւեալը կը քաղենք :

«Պ. Քրուկէր Բարիզ եկաւ այս առտու, Մեծ Ժողովրդականութիւն վախելող օտար վեհապետի մը պատուով ընդունուեցաւ : Հակամարտական շատ մը աղերսներ մատուցուեցան իրեն : Խուռն բազմութեամբ մը լցուած էր փողոցները երբ Պ. Քրուկէր կառքով կանցներ :»

Պ. Լուպէ՛ ֆրանսայի նախագահը՝ պաշտօնական կերպով ընդունեց զինք կէս օրէն վերջը և յետոյ փոխադարձ

այցելութիւն տուաւ : Կառավարութիւնը Վերսալէն Եի Թոմիթի

Պաղտթիւն մ'իշկած է հիմա Գերմանիոյ և Թուրքիոյ միջև, Պարսանի կզղւոյն ածուխի տուրքին համար : Բ. Գուր կուզէ որ տաճկական տուրք մը հաստատէ հոն. Գերմանիան հակառակը կը պնդէ :

### ՉԻՆԱՍՏԱՆ

Բէքինէն կը հեռագրեն թէ՛ Լի-ձունկ-Չանկ պաշտօնական կերպով հաղորդած է Պ. Թիչուի՛ Թիւան իշխանին և միւս բարձր պաշտօնեաներու պատօճոյ խնդիրը շոյափող Կայսերական հրովարտակը :

Այս հրովարտակը կ'ըսէ որ Թիւան իշխանը թող բանտարկուի Մուքսէնի մէջ : Մուքսէն Մանչուրիի մայրաքաղաքն է, որ այժմ Ռուսներուն իշխանութեան տակնէ . . . : Բայց տեսնենք թէ Թիւան իշխանը (Կայսեր հօրեղբայրը) պիտի բանտարկուի :

«Թայմզ»-ի կը գրեն թէ՛ Լի-ձունկ-Չանկ տէրութեանց ներկայացուցիչներուն յայտարարած է որ, Թիւան իշխանը Նիւ-ձիա-Սէյն փախած է : Այս քաղաքը Մոնկոլեան սահմանազուխը կը գտնուի :

Թիւնը ամեն զգուշութիւն ի գործ կը դնէ, ո՛ր և է հակամարտական ցոյց չ'պատահելու համար : Անդդիական հր. պատերազմ պահուած է :

Ատոր վրայ Օտար գործակալները յանցաւորներու պատժոյ խնդրոյն առթիւ իրենք իրենց մէջ նոր խորհրդակցութեանց սկսեցին : Այնպէս կ'երևայ թէ յանցաւորները չ'ինական օրինօք պիտի պատժուին վերջապէս, բայց տեսնենք թէ Չինաստան ասոր համար օրէնք մ'ունի :

\* \*

Ռուսական մի քանի բանակ պիտի մնայ դեռ Մանչուրիի մէջ երկաթուղիներու պաշտպանութեանը համար : Զօրքերը պիտի քաջուին հետզհետէ մինչև որ խաղաղութիւնը լաւ մը հաստատուի :

### Ե Գ Ի Պ Տ Ա Յ Ի Ն

(Շար. մախուր թիւէն եւ վերջ)

Արեւելցի մանուկը խաղալիքն ինչ է չը գիտեր. պատկեր. շտեմներ, բանով մը չըբաղիր, բան մը չտոբիր, վերջապէս բանի վրայ չմտածեր :

Եւ երբ տանընթէ կամ տաներկու տարեկան կ'ըլլայ տղան, որ աշխարհքէն լուր չունի, միտքը ամենապարզի սնունդ մ'անգամ առած չէ, ու զարոց կը տանին վիճք, իրաւ որ հրաշք է եթէ որդիակը կարող կ'ըլլայ քանի մը տարիներ աշխատիլ. Բաց ատիկա յարզի կրակին կը նմանի որ շատ . . . շուտ կը մարի. կը նմանի այն տանը որ աւազի վրայ շինուած է . . . : Առանց հիման ինչ հաստատութեան կարելի է ըստպատել :

Եւ երբ այս տղան երիտասարդ կ'ըլլայ ու վկայականներն ի ձեռին զպրօցն կ'իշխէ, շատ բնական է որ, աւագ, իր մանկութեան միջոցին իրեն ներշնչուած արգահատելի ուսակութիւնները վերստին ձեռք պիտի առնէ. քիչ քիչ նորէն իր մանկութեան նախնական վիճակին մէջ պիտի իյնայ. ո՛չ բան մը ընել պիտի գիտնայ, ո՛չ բան մը խորհիլ. և սրբվհեան բնութեան մէջ մարդ կայուն վիճակ մը չունի, ու ըզգայարանները միշտ կը զարգանան խեղճ արեւելցիին օրէ օր աւելի ոչնչութեան մէջ կը գորի :

Հիմա քանի որ հիւանդութեան պատճառը գիտցանք, տեսնենք ինչ է զայն դար-

մանելու միջոցը. շատ վերին է այն — մանկան կատարեալ դաստիարակութիւն մը տալ :

Դաստիարակութիւնը — մտքի ու բարոյականի կազմութիւնը — մանկութեան կեանքին հետ պէտք է սկսիլ : պարտկուց մանուկներուն տարուելիք խնամքներուն վրայ չպիտի խօսինք հիմա կարգ մը բժշկներուն պէս, որոնք կազդուուելու համար միս ու գինի կ'առաջարկեն այն աղքատ հիւանդին որ գրպանը սու մը չունի. վերջը, երբ որ պատեհ առիթը ներկայանայ, երբ երիտասարդ մայրերը մեր փափագին համեմատ պատրաստուին, կը յուսանք թէ այն ժամանակ պիտի կրնանք յայտնել այդ մասին մեր կարծիքը :

Այսօր անոր վրայ միայն պիտի խօսինք թէ ինչ կարելի է ընել հիւանդունէ ըստպատելու :

Կրթութիւնը դաստիարակութեան հետ չըբաժնուի չէ երբէք. կրթութիւնը դաստիարակութեան մէկ մասն է լոկ. և մանուկը դաստիարակելէ առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել իր բնածին յատկութիւններն ու մտքի կարողութիւնները, ու անոր համեմատ զայն դաստիարակել :

Ինչպէս ամեն ստամոքսի այնպէս ալ ամեն մտքի իրեն յարմար կերակուրը տալու է : Եզիպտացիին խորհող է իրականապէս. անոր կարողութիւններն ուրեմն պէտք է զարգացնել նախ, շատ ծանրանալու չէ սակայն մտքին վրայ, որովհետև միշտ իր յենարանն է ան : Սովորատ շատ լաւ հասկցած էր ասի, և ինք ամեն բանի սկզբունքն ու օրէնքը իր աշակերտներուն զննել կուտար. փորձուած է այս միջոցը, և տեսնուած է որ եօթը տարեկան տղան իր սորված քերականութիւնը ինք կրնայ շարադրել այս կերպով :

Տղան իր առաջին բոլոր տարիներուն մէջ միտքը բացարձակապէս անզոր է անմշակ թուած ըլլալուն համար շատ կարեւոր է որ այնուհետև կարելի եղածին չափ զանազանութեամբ մը զբաղած ըլլայ միշտ : Տղուն աշխատութիւնը մանաւանդ շատ հետաքրքրական ըլլալու է, և երբէք երկար յոգնեցուցիչ ըլլալու չէ ան : Տղուն խաղալ անգամ սովորեցնելու է. խաղը կը կազմէ անոր ճաշակը, և կարելի եղածին չափ շուտ կը զարգանայ անոր մէջ գեղեցիկին ու գէկէն ուրը :

Թողունք մարմնամարդութիւնն որ մեծապէս կը նպաստէ տղան զօրացնելու :

Մենք կատարելապէս համոզուած ենք որ Եզիպտացիին շատ շուտ պիտի ստանայ իր տեղը աշխարհի մէջ :

Անզորութիւնն է որ կ'սպաննէ գնա . . . զիտուած է որ արարական գեղարուեստաբար ժողովրդին աշխարհակալութեան ատենը միայն ապրեցաւ :

Շատ անգամներ լսած եմ որ կ'ըսեն թէ Արեւելցիները չի անգամ մտածեր . . . կը հաւատամ, ճշմարիտ է ասիկա . . . բայց չէ՛ որ հոն իր բնատուր յատկութիւնը կը պակի, ընդդիմաբար թերութիւնը անոր տեղ կ'անցնի : Այսպէս կ'ինք, իր այնքան դիւրագգած բնութեամբ հանդերձ, յեղաշրջութեանց մէջ մարդէն աւելի սուկալի եղած է միշտ :

Խորհիլ սովորեցնենք օւրեմն շատ պզտիկուց Եզիպտացիին, և զինք իր ճամբուն մէջ դրած պիտի ըլլանք. ամեն օր իր միտքը զօրանալով, աշխատութեան պէտքը պիտի զգայ. այն ատեն իրօք մեծցած պիտի ըլլայ. յատուղիմութեան փափաքը կանգ չ'աններ իրեն մէջ, և մենք նուիրական գործ մը կատարած կ'ըլլանք երբ կ'օգնենք որ անոնք ձեռք առնեն նորէն իրենց մտաւոր հրաշալի կարողութիւնները :

### ԲԱՑ ՆԱՄԱԿ

Տեղական Հայերէն Թերթի մը 128 երրորդ թիւին մէջ դարձեալ Պ . . . սկզբնատուով յօդուած մը իմ ծիծաղաւ շարժեց. իմ անձիս դէմ կարգ մը ստալոգ վայրաբանութեաններով պղծուած այդ տողերուն երբեք չը պիտի գիշանէի պատասխանել եթէ Պ. Պ . . . յանդգնած չըլլար գարձածելու ի շարս այդ պղծեալ տողերու, անձնատրութեան մը տիտղոսը և արժանիքը որ ամենուս համար նըուիրական ճանչցուած է, որուն համար մեր պարտքն, ակնածանք է միմիայն :

Վերջապէս իմ և թէ Պ. Պ . . . ի և «Ջննդին» իրենց՝ կարողութիւնէն վեր է սաւառնիլ այդ արժանիքներուն մօտ :

Կը ցաւիմ ըսելու որ Պ. Պ . . . փոխանակ իմ զիտողութիւններէս օգտուելու, համարձակած է նորէն հըրապարակ նետուիլ. կը յուսայի որ «Նոր-Օր» թիւին մէջ «Գրական հրապարակ» վերնագրով երկցած խըմբազրականէն օգտուելով գէթ կը բըժշկուէր իր հրապարակային ցուցամոլութեանէն :

Պ. Պ . . . կ'ըսէ «Իբր թէ իմ գրածներս սուղից եղած ըլլան ուրիշի մը կողմէն, և այդ առթիւ, ինչպէս ըսի, մասնանիչ կ'ընէ ուրիշ անձնատրութիւն մը :

Պ. Պ . . . իր գրիչով կը հաստատէ իր նորընծայ մը ըլլալը խմբազրական ասպարէզին մէջ :

Որքան որ հրապարակագիր չեմ, բայց սա չափը զիտեմ որ, երբ յօդուած մը կը զրկուի թերթի մը խըմբազրութեան ունէ մէկէ մը, թերթին խմբազրութիւնը իրաւունք ունի քիչ շատ բարեփոխելու այդ յօդուածին ոճը, լեզուն և գաղափարները. եթէ յօդուածը ուսմիկ գրչէ մը ելած է, քիչ շատ ազնուացնելով զայն :

Կը փափաքէի որ մեր բարեկամ Պ. Պ . . . ուսմիկի և ազնուականներու տարբերութեանը վրայ քարոզելէ առաջ ուսումնասիրած ըլլար այս կէտերը ևս :

Ինչպէս որ ուսմիկ մարդ մը կրնայ ազնուականանալ, նոյնպէս ուսմիկական գրուած մը կրնայ ազնուանալ և բարեփոխուիլ :

Եթէ Պ. Պ . . . այդ բարեփոխութիւնը իբր սուղիցօտոթիս կը նկատէ, կը հիանամ :

Պ. Պ . . . ի իրարանցումէն և զըրուածներէն ևս այնպէս կը նշմարեմ թէ՛ Մրճարան-Ընթերցատուն բառերը հրապարակի ակնաշին անպատեհա ինք սուղից ըրած պիտի ըլլայ, որ այնքան նախանձախնդիր կըլլայ կոր :

Իրեն ինչ, Սրճարան-Ընթերցատուն բառը գործածեր եմ փոխանակ Լսարան-Ընթերցատունի. քանի որ Պէնիկանի խնդրով կը զբաղի, Պէնիկանի խնդիրը ինչ կապ ունի Լսարանին և կամ Սրճարանին մասին գործածուած բառի մը հետ :

Ո՛չ, կերելի թէ Պազար-Մուրուրի Սրճարան-Ընթերցատան հաստատութեան հեղինակը և կամ ատոր ըս-

